https://doi.org/10.59546/18290744-2025.4-6-47

ԵՎԱ ՍԱՂՈՅԱՆ
ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական,
Երևանի պետական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

ЕВА САГОЯН
Советник Генерального прокурора Республики Армения,
преподаватель кафедры гражданского права
юридического факультета Ереванского государственного университета

EVA SAGHOYAN
Advisor to the Prosecutor General of the Republic of Armenia,
Lecturer at the Chair of Civil Law, Faculty of Law,
Yerevan State University

ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

BASES FOR THE EXCLUSION OF CIVIL LIABILITY OF SUBJECTS OF TOURISM ACTIVITY

УСЛОВИЯ ОСВОБОЖДЕНИЯ СУБЪЕКТОВ ТУРИСТИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ОТ ГРАЖДАНСКО-ПРАВОВОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Ներածություն

Քաղաքացիաիրավական պատասխանատվության առաջացման համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ, որոնք կազմում են քաղաքացիական իրավախախտման կազմը: Ընդհանուր կանոնի համաձայն՝ այդ պայմաններ են՝ իրավախախտի հակաօրինական վարքագիծը, տուժողի կրած վնասները, հակաօրինական վարքագծի և վնասների միջև պատճառական կապը և վնաս պատճառողի մեղքը: Միևնույն ժամանակ, կախված նրանից, թե քաղաքացիաիրավական ինչ հարաբերությունների նկատմամբ է կիրառվում պատասխանատվությունը, նշված պայմանները կարող են փոփոխվել կամ բացակայել[1]: Քաղաքացիական իրավունքում այս կանոնի դրսևորումներից է զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակեր-

[1] Տես Гражданское право, Учебник в 4-х томах, Том 1, под ред. *Е.А. Суханова,* 2-е изд., М. “Статут”, 2019, էջ 523:

պելու պարտավորությունը խախտելու համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների քաղաքացիաիրավական պատասխանատվության ինստիտուտը:

Հիմնական հետազոտություն

Թեև Հայաստանի Հանրապետությունում զբոսաշրջային գործունեության հետ կապված իրավահարաբերությունները, այդ թվում՝ այդ գործունեության քաղաքացիաիրավական կողմը, մասնավորապես՝ սպառողներին զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու գործընթացը կանոնակարգող «Զբոսաշրջության մասին» նոր օրենքով[2] զբոսաշրջային գործունեության սուբյեկտների քաղաքացիական պատասխանատվության հարցն իրավական կարգավորման չի ենթարկվել, բայցևայնպես օրենսդիրը մատնանշել է զբոսաշրջային գործունեության սուբյեկտների՝ զբոսաշրջային օպերատորի և գործակալի կարգավիճակը՝ այդպիսով կանխորոշելով նաև վերջիններիս քաղաքացիական պատասխանատվության պայմանները: Այսպես, ըստ Օրենքի, զբոսաշրջային օպերատորներ կարող են լինել բացառապես իրավաբանական անձինք, իսկ զբոսաշրջային գործակալներ՝ իրավաբանական անձինք կամ անհատ ձեռնարկատերերը (հոդված 3, մաս 1, կետեր 19, 20):

Վերոնշյալ նորմից բխում է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտները քաղաքացիական շրջանառությունում հանդես են գալիս որպես գործարարներ, ինչը նշանակում է, որ զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու պարտավորությունը խախտելու համար վրա հասնող պատասխանատվության դեպքում կիրառելի չէ քաղաքացիական իրավախախտման ամբողջական կազմը. այս դեպքում իրավախախտի մեղքը պարտադիր պայման չէ[3]:

Զբոսաշրջային գործունեության սուբյեկտները՝ որպես գույքային հարաբերություններում սեփական ռիսկով գործող արհեստավարժ մասնակիցներ, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում առանց մեղքի[4]: Հետևաբար, վերջիններիս քաղաքացիական պատասխանատվությունից ազատելու պայման է անհաղթահարելի ուժի առկայությունը: Ընդ որում՝ զբոսաշրջային օպերատորի կոնտրագենտներ հանդիսացող զբոսաշրջային ծառայությունները մատուցողների կողմից պարտավորությունը խախտելն անհաղթահարելի ուժ չի կարող համարվել:

Դա ուղղակիորեն բխում է ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտների պատասխանատվության կանոններից: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի[5] 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Նման հանգամանքներ չեն, մասնավորապես, պարտականությունների խախտումը պարտապանի կոնտրագենտների կողմից, շուկայում անհրաժեշտ ապրանքների կամ պարտապանի մոտ անհրաժեշտ դրամական մի-

[2] «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-4-Ն, ընդունվել է 22.12.2023 թ., ուժի մեջ է մտնելու՝ 01.09.2024 թ., սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2024.01.9-2024.01.21, այսուհետ նաև՝ Օրենք:

[3] Տես *Завьялова С.,* Проблемы гражданско-правового регулирования туристской деятельности в Российской Федерации, Монография, М., Проспект, 2016, էջ 39:

[4] Տես *Բարսեղյան Տ. Կ.,* Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, 3-րդ հրատ., «Երևանի համալսարանի» հրատ., Երևան, 2006, էջ 529:

[5] Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

ջոցների բացակայությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսել է պարտապանին պատասխանատվությունից ազատելու ևս մեկ պայման. եթե պարտավորության խախտումը տեղի է ունեցել **պարտատիրոջ մեղքով**, մասնավորապես՝ վերջինիս կողմից պարտապանի առաջարկած պատշաճ կատարումն ընդունելուց հրաժարվելու, օրենքով, այլ իրավական ակտերով կամ պայմանագրով սահմանված կամ գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից բխող այնպիսի գործողություններ չկատարելու դեպքում, որոնք չկատարելու դեպքում պարտապանը չէր կարող կատարել իր պարտավորությունը, պարտապանը պատասխանատվության ենթարկվել չի կարող: Ավելին, պարտատիրոջ կետանցը պարտապանին իրավունք է տալիս պահանջել հատուցելու դրանով պատճառված վնասները, եթե պարտատերը չի ապացուցում, որ կետանցն առաջացել է այնպիսի հանգամանքներում, որոնց համար ոչ ինքը, ոչ էլ այն անձինք, որոնց վրա օրենքի, այլ իրավական ակտերի ուժով կամ պարտատիրոջ հանձնարարությամբ դրված է կատարման ընդունումը, պատասխանատու չեն (Քաղ. օր., հոդված 422):

Այսպիսով, ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ պարտապանին պատասխանատվությունից ազատելու և վերջինիս պատճառված վնասը հատուցելու պայման է նաև պարտատիրոջ մեղքը, ընդ որում՝ կոնկրետ իրավահարաբերություններ կարգավորող նորմերում, ելնելով այդ հարաբերությունների առանձնահատկություններից, օրենսդրորեն սահմանվում է մեղքի այն ձևը, որի առկայության դեպքում իրավախախտն ազատվում է պատասխանատվությունից[6]: Այն դեպքերում, երբ գործարարական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չի կատարվում կամ ոչ պատշաճ է կատարվում անհաղթահարելի ուժի կամ **տուժողի դիտավորության հետևանքով** (ընդգծումը մերն է), պարտապանը պատասխանատվությունից ազատվում է[7]:

«Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքում հատուկ կարգավորումների բացակայության պայմաններում, փաստորեն, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների նկատմամբ կիրառելի են գործարարների քաղաքացիաիրավական պատասխանատվությունը բացառող՝ վերոշարադրյալ ընդհանուր պայմանները:

Մինչդեռ, այս հարցում ուշագրավ է եվրոպական երկրների փորձը, որոնք սահմանել են պարտավորությունը խախտելու համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու հատուկ պայմաններ: Այսպես, «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» Եվրոպական խորհրդի և Խորհրդարանի 2015 թվականի նոյեմբերի 25-ի դիրեկտիվը[8] արտակարգ և անխուսափելի հանգամանքների հետևանքով պարտավորությունը չկատարելու դեպքից բացի զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը բացառում է նաև պարտավորության այն խախտումների դեպքում, որոնք **վերաբերելի են ճանապարհորդին կամ զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայության մատուցման հետ կապ չունեցող երրորդ անձի** և նման խախտումներն անկանխատեսելի և անխուսափելի են եղել (Դիրեկ-

[6] Տես *Բարսեղյան Տ. Կ.*, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, 3-րդ հրատ., «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2014, էջ 540:

[7] Տես *Բարսեղյան Տ. Կ.*, նշված աշխատ., էջ 530:

[8] Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of 25 November 2015 *"On package travel and linked travel arrangements"*, amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and repealing Council Directive 90/314/EEC, (այսուհետ նաև՝ Դիրեկտիվ կամ ԵՄ դիրեկտիվ):

տիվ, հոդված 14, մաս 3):

«Ճանապարհորդին վերաբերելի» արտահայտությունը թույլ է տալիս եզրակացնել, որ խոսքը ոչ միայն վերջինիս մեղավոր վարքագծի, այլև ճանապարհորդի հետ կապված ցանկացած, այդ թվում՝ օբյեկտիվ հանգամանքների հետևանքով վերջինիս կողմից թույլ տրվող կետանցի մասին է: Այս նորմը նման կերպ են մեկնաբանում նաև Դիրեկտիվը մեկնաբանող եվրոպացի հեղինակները: Այսպես, Մ. Վուկոշիցը նշում է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու հիմք են ոչ միայն այն դեպքերը, երբ սպառողն ակտիվորեն (նկատի է ունեցվում սպառողի մեղքով - **Ե.Ս.)** նպաստում է պարտավորության խախտմանը, օրինակ՝ ուշանում է թռիչքի սահմանված ժամից, այլև այն դեպքերը, երբ վերջինս չի ցանկանում կամ չի կարողանում պատշաճ կատարումն ընդունել իրեն առնչվող հանգամանքների, օրինակ՝ հիվանդության կամ պատահարի պատճառով[9]:

Հաշվի առնելով զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության բավականին խիստ կանոնները, մասնավորապես՝ վերջիններիս առանց մեղքի պատասխանատվությունը, կարծում ենք, որ ոչ միայն սպառողի մեղքով, այլև վերջինիս առնչվող օբյեկտիվ պատահարների հետևանքով կետանցի դեպքում պարտավորությունը չկատարելու համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելն արդարացված է:

Ինչ վերաբերում է սպառողի կետանցի հետևանքով նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատճառված վնասի հատուցում պահանջելուն, որը կարող է ներառել ինչպես ճանապարհորդությունը կազմակերպելուն ուղղված փաստացի ծախսերի տեսքով արտահայտված իրական վնասը, այնպես էլ տվյալ զբոսաշրջային փաթեթն այլ անձի չառաջարկելու հետևանքով կրած բաց թողնված օգուտը, ապա կարծում ենք՝ այդ իրավունքից վերջիններս, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան, կարող են օգտվել **միայն պարտատեր-սպառողի մեղքի առկայության դեպքում:**

Ուշադրության արժանի է զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու՝ Դիրեկտիվով նախատեսված երկրորդ պայմանը, այն է՝ պարտավորության խախտումը զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայության մատուցման հետ կապ չունեցող երրորդ անձին վերաբերելի լինելը, եթե նման խախտումներն անկանխատեսելի և անխուսափելի են եղել:

Այս պայմանը, ենթադրաբար, Դիրեկտիվում տեղ է գտել եվրոպական դատական պրակտիկայում հաճախ հանդիպող այնպիսի իրավիճակների համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվությունը բացառելու նպատակով, որոնք չեն առնչվում փաթեթում ներառված ծառայությունները մատուցելու հետ և, որպես կանոն, արտապայմանագրային պատասխանատվության հիմք են, ինչպես օրինակ՝ ճանապարհորդության ընթացքում խանութում ճանապարհորդի իրերի գողությունը, դժբախտ պատահարները և նմանատիպ այլ իրավիճակներ:

Հատկանշական է, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության սահմաններին բավականին տարածական մեկնաբանություն են տալիս հատկապես անգլիական դատարանները: Օրինակ՝ անգլիական դատական պրակտիկայից հայտնի է մի դեպք, երբ զբոսաշրջիկը ճանապարհորդության ընթացքում հյուրանոցի լողավազանում սայթաքելու հետևանքով առողջությանը պատճառված վնասի հատուցման պահանջ էր ներկա-

[9] Տես *Carlos Torres, Javier Melgosa Arcos, Laurence Jegouzo* and others, Collective commentary about new Package travel directive, ESHTE, 2020, էջ 348:

յացրել զբոսաշրջային գործունեության սուբյեկտի դեմ, ով կազմակերպել էր իր ճանապարհորդությունը՝ այն հիմնավորմամբ, որ լողավազանը նախագծելիս չեն պահպանվել անհրաժեշտ ստանդարտները, ինչի արդյունքում լողավազանում սայթաքելու հավանականությունը մեծ է եղել: Անգլիական դատարանն արձանագրեց, որ եթե ապացուցվեր, որ լողավազանը կառուցելիս անհրաժեշտ ստանդարտները չեն պահպանվել, զբոսաշրջային օպերատորը պատասխանատվություն կկրեր զբոսաշրջիկին պատճառված վնասի համար[10]: Մեկ այլ գործով Միացյալ Թագավորության Բարձրագույն դատարանը ճանապարհորդության կազմակերպչին պատասխանատու էր ճանաչել ճանապարհորդության ընթացքում զբոսաշրջիկին հյուրանոցի աշխատակցի կողմից բռնաբարելու հետևանքով պատճառված վնասի համար՝ այն հիմնավորմամբ, որ հյուրանոցը պատշաճ չի կատարել իր հաճախորդների անվտանգություն ապահովելու՝ պայմանագրային պարտականությունը[11]:

Ինչպես կարելի է նկատել, անգլիական դատական պրակտիկայում զբոսաշրջային գործունեություն սուբյեկտները՝ որպես ճանապարհորդությունը կազմակերպողներ, պատասխանատու են ճանաչվում ճանապարհորդության ընթացքում զբոսաշրջիկին ցանկացած հիմքով պատճառված ցանկացած վնասի համար: Մինչդեռ, մեր կարծիքով, զբոսաշրջային փաթեթում ներառված զբոսաշրջային ծառայությունների պատշաճ մատուցման համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների՝ որպես ճանապարհորդությունը կազմակերպող ձեռնարկատերերի պատասխանատվությունը նախատեսող նորմեր ամրագրելու պարագայում[12] վերջիններիս պատասխանատվության նման անհարկի լայն մեկնաբանման վտանգը բացառե-

[10] Տես Judgment of England and Wales High court of 28/07/2005, on case *Healy v Cosmosair* https://www.casemine.com/judgement/uk/5a8ff74e60d03e7f57eab0ff):

[11] Տես Judgment of Supreme Court of United Kingdom of 30/07/2021, on case *X v Kuoni Travel Ltd,* https://www.supremecourt.uk/cases/docs/uksc-2018-0102-judgment-1.pdf

[12] Չնայած ՀՀ զբոսաշրջային օրենսդրությունը ԵՄ դիրեկտիվին մոտարկելու՝ հայրենական օրենսդրի փորձին՝ «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքի կարգավորման դաշտից դուրս է մնացել զբոսաշրջային ծառայությունների համար քաղաքացիական պատասխանատվության հարցը: Միջազգային պրակտիկայում այդ ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտի հարցում գոյություն ունի երկու հիմնական մոդել: Այսպես կոչված «եվրոպական» մոդելը ենթադրում է, որ զբոսաշրջային փաթեթներում ներառված զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվությունը սուբյեկտը զբոսաշրջային գործունեության սուբյեկտներն են՝ անկախ նրանից, թե ում կողմից են մատուցվում այդ ծառայությունները: Երկրորդ՝ «ամերիկյան» մոդելը ենթադրում է յուրաքանչյուր զբոսաշրջային ծառայության համար դա մատուցողի պատասխանատվությունը: ՀՀ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդրական կարգավորումների իսպառ բացակայության պայմաններում զբոսաշրջային գործունեության սուբյեկտները և զբոսաշրջային ծառայությունները մատուցողները համագործակցում են քաղաքացիաիրավական տարբեր պայմանագրերի հիման վրա՝ որպես սպառողին մատուցվող ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտ մի դեպքում նախատեսելով նրանցից մեկին, մյուս դեպքում՝ մյուսին: Ավելին, գործնականում լայն տարածում ունի նաև սպառողի ընտրությամբ այնպիսի զբոսաշրջային ծառայությունների համակցմամբ զբոսաշրջային փաթեթներ ձևավորելը, որոնք մատուցողների հետ զբոսաշրջային գործունեության սուբյետկները պայմանագրային հարաբերությունների մեջ առհասարակ չեն գտնվում: Զբոսաշրջային գործունեության սուբյեկտների և զբոսաշրջային ծառայություններ մատուցողների փոխգործակցության նման տարատեսակ եղանակների պայմաններում պատասխանատվության սուբյեկտի հարցում առկա հակասական պրակտիկան բացառելու նպատակով գտնում ենք, որ անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ծառայությունների համար պատասխանատվության հստակ մոդել: Մասնավորապես՝ նկատի ունենալով զբոսաշրջային օպերատորի կողմից զբոսաշրջային փաթեթ ձևավորելու և դրա շրջանակներում անձամբ կամ զբոսաշրջային գործակալի միջոցով կամ նրա հետ համատեղ սպառողի ճանապարհորդությունը կազմակերպելու պարտականություն ստանձնելու հանգամանքները՝ կարծում ենք՝ այդ փաթեթներում ներառված զբոսաշրջային ծառայությունների համար (բացառությամբ օրենքով նախատեսված առանձին ծառայությունների) անհրաժեշտ է նախատեսել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության մեխանիզմը՝ որպես սպառողների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանություն ապահովող և կողմերի պայմանագրային հարաբերությունների էությանն առավել համապատասխանող պատասխանատվության մոդել:

լու նպատակով զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու՝ ԵՄ դիրեկտիվով ամրագրված այս պայմանը միանգամայն արդարացված է:

Ինչպես հայտնի է, ծառայությունների թերությունների համար կարող է վրա հասնել ինչպես պայմանագրային, այնպես էլ արտապայմանագրային պատասխանատվություն: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1088-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից: Նույնաբովանդակ կարգավորումներ է նախատեսում նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի[13] 15-րդ հոդվածը:

Միևնույն ժամանակ, Օրենսգիրքը ծառայությունները թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ կատարելը բնորոշում է որպես պարտավորության խախտում (հոդված 408), որի համար վրա է հասնում պատասխանատվություն: Ծառայության մատուցման թերությունների հետ կապված իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում պահանջելու՝ սպառողի իրավունքն ամրագրում է նաև ՍԻՊ օրենքը (հոդված 27, մաս 1):

Դժվար չէ նկատել, որ առաջին դեպքում խոսքը ծառայությունների թերությունների հետևանքով վրա հասնող արտապայմանագրային, իսկ երկրորդ դեպքում՝ պայմանագրային պատասխանատվության մասին է:

Գործնականում հնարավոր է, որ կողմերը գտնվեն պայմանագրային հարաբերությունների մեջ, և նրանց միջև ծագի նաև արտապայմանագրային պարտավորություն, որը շատ հնարավոր է, որ ընդհանրապես առնչություն չունենա պայմանագրի հետ, ինչպես նաև հնարավոր է, որ կողմերի միջև դելիկտային պարտավորություն ծագի հենց պայմանագրի առնչությամբ[14]:

Եթե զբոսաշրջային փաթեթում ընդգրկված ծառայությունների համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների պատասխանատվության մոդելն ամրագրելու պարագայում զբոսաշրջային ծառայության թերությունների հետևանքով սպառողին պատճառված **պայմանագրային** վնասի համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտի պատասխանատվությունը միանշանակ է, ապա նույն հիմքով ծագող արտապայմանագրային վնասի հատուցման առնչությամբ պատասխանատվության սուբյեկտի հետ կապված առաջանում են որոշակի հարցեր: Մասնավորապես՝ հարց է ծագում՝ որպես ճանապարհորդության կազմակերպիչ, զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պատասխանատու է արդյոք նաև ծառայության/ների/ թերությունների հետևանքով սպառողի անձին կամ գույքին պատճառված վնասի համար: Այս հարցին պատասխանելու համար հարկ ենք համարում բերել երկու օրինակ.

Այսպես, պատկերացնենք մի իրավիճակ, երբ զբոսաշրջային փաթեթում ներառված հյուրանոցում մատուցվող սննդից սպառողը ստանում է սննդային թունավորում: Պարզվում է, որ հյուրանոցի կողմից մատուցվել է ժամկետանց սնունդ, ինչն էլ եղել է սննդային թունավորման պատճառը: Երկրորդ իրավիճակում նույն հյուրանոցի աշխատակիցը սկուտեղը տեղափոխե-

[13] Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-197, ընդունվել է 26.06.2001 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.2002 թ.,ՀՀՊՏ 2001.08.02/25(157) Հոդ. 580, այսուհետ՝ ՍԻՊ օրենք:

[14] Տես *Բեքմեզյան Գ. Հ.*, Արտապայմանագրային պարտավորություններ, Երևան, 2009, «ԵՊՀ հրատ.», էջ 9:

լիս դրանում գտնվող դանակով անզգուշությամբ մարմնական վնասվածք է հասցնում սպառողին, ինչի հետևանքով վերջինս կրում է առողջության վերականգնմանն ուղղված ծախսեր:

Մեր կարծիքով, նշված երկու իրավիճակներն էապես տարբերվում են: Մասնավորապես, առաջին դեպքում սպառողի առողջությանը պատճառված վնասը հետևանք է հյուրանոցի՝ պատշաճ որակի սնունդով ապահովելու պայմանագրային պարտավորության խախտման, որի հետևանքով պատճառված վնասի համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտների՝ որպես ճանապարհորդության, այդ թվում՝ հյուրանոցային ծառայության կազմակերպչի պատասխանատվությունը, ըստ մեզ, իրավաչափ է: Մինչդեռ երկրորդ իրավիճակում սպառողի կրած վնասը ոչ թե հյուրանոցային ծառայությունների մատուցման՝ պայմանագրային պարտականությունը խախտելու, այլ հյուրանոցի աշխատակցի անզգուշության հետևանք է, որի համար իրավաբանական անձի՝ իր աշխատողի պատճառված վնասի համար պատասխանատվության կանոններով, պետք է պատասխանատվություն կրի հյուրանոցը:

Վերջին դեպքում, ըստ մեզ, առկա է զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու՝ ԵՄ դիրեկտիվով նախատեսված քննարկվող պայմանը, քանի որ պարտավորության խախտումը թույլ է տրվել զբոսաշրջային փաթեթում ներառված ծառայությունը մատուցելու՝ պայմանագրային պարտավորության հետ կապ չունեցող խախտման արդյունքում և այդ խախտումը զբոսաշրջային գործունեության սուբյեկտ(ներ)ի համար անկանխատեսելի և անկանխելի է եղել:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ զբոսաշրջային օրենսդրությունը ԵՄ դիրեկտիվին մոտարկելու հանձնառությունը[15]՝ գտնում ենք, որ «Զբոսաշրջության մասին» օրենքում անհրաժեշտ է նախատեսել զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու հատուկ պայմաններ, որոնք են պարտավորության խախտումը սպառողին վերաբերելի լինելը կամ տվյալ պայմաններում արտակարգ և անխուսափելի հանգամանքների հետևանքով (անհաղթահարելի ուժ) տեղի ունենալը, ինչպես նաև զբոսաշրջային փաթեթում (տուրում) ներառված ծառայություն մատուցելու պայմանագրային պարտավորության հետ կապ չունեցող պատճառներով սպառողին վնաս պատճառելը:

Միևնույն ժամանակ, առաջարկում ենք «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքում զբոսաշրջային ծառայությունների մատուցումը կազմակերպելու իրավահարաբերությունների նկատմամբ մասնավորեցնել պարտատիրոջ կետանցի հետևանքով պատճառված վնասը հատուցելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված ընդհանուր կանոնը՝ սահմանելով, որ սպառողի կետանցը զբոսաշրջային գործունեության սուբյեկտին իրավունք է տալիս պահանջելու հատուցել դրանով պատճառված վնասները, եթե սպառողը չի ապացուցում, որ կետանցն առաջացել է այնպիսի հանգամանքներում, որոնց համար ինքը պատասխանատու չէ:

Ամփոփագիր: Հոդվածում «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքի, ԵՄ զբոսաշրջային օրենսդրության, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսդրության ընդհանուր դրույթների լույսի ներքո քննարկվում են պարտավորությունը խախտելու համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին քաղաքացիական պատասխա-

[15] Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Համապարփակ և ընդլայնված գործընկերության» համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է իր օրենսդրությունը նշված դիրեկտիվին մոտարկելու հանձնառություն:

նատվությունից ազատելու պայմանները: Հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ որպես պարտավորության խախտման համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու պայման ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված՝ անհաղթահարելի ուժ հանդիսացող հանգամանքներից բացի անհրաժեշտ է նախատեսել նաև հատուկ պայմաններ, որոնք են՝ պարտավորության խախտումը սպառողին վերաբերելի լինելը, ինչպես նաև զբոսաշրջային փաթեթում (տուրում) ներառված ծառայություն/ներ/ը մատուցելու՝ պայմանագրային պարտավորության հետ կապ չունեցող պատճառներով սպառողին վնաս պատճառելը:

Annotation. The article discusses bases for the exclusion of civil liability of subjects of tourism activity for the rendering of services, included in the package tour, in the light of the regulations of the new RA Law "On Tourism", EU tourism legislation, as well as the general provisions of civil legislation. The author comes to the conclusion that in addition to the force majeure circumstances, provided for by the Civil Code of the Republic of Armenia, it is also necessary to stipulate special bases for the release of subjects of tourism activity from civil liability, such as non-fulfillment of an obligation because of reasons, related to the consumer, as well as causing damages to the consumer for reasons not related to the contractual obligation of providing tourist services included in the tourist package (tour).

Аннотация: В статье анализируются условия освобождения субъектов туристической деятельности от гражданско-правовой ответственности за оказание услуг, включенных в туристический пакет в свете регулирований нового Закона РА «О туризме», туристического законодательства ЕС, а также общих положений гражданского законодательства. Автор приходит к выводу, что помимо обстоятельств непреодолимой силы, предусмотренных Гражданским кодексом Республики Армения, как условие освобождения субъектов туристической деятельности от ответственности за нарушение обязательств, необходимо предусмотреть особые условия такие, как нарушение обязательства по причинам, связанным с потребителем, а также причинение вреда потребителю по причинам, не связанным с договорным обязательством оказания туристических услуг, включенных в туристический пакет (тур).

Բանալի բառեր *- զբոսաշրջային օպերատոր, զբոսաշրջային գործակալ, առանց մեղքի պատասխանատվություն, կեղտանց, սպառող, պատասխանատվությունից ազատելու պայմաններ, անհաղթահարելի ուժ, արտապայմանագրային պատասխանատվություն:*

Key words: *tour operator, travel agent, strict liability, delay, consumer, conditions for release from liability, force majeure, non-contractual liability.*

Ключевые слова: *туристический оператор, туристический агент, ответственность без вины, просрочка, потребитель, условия освобождения от ответственности, непреодолимая сила, внедоговорная ответственность.*

Օգտագործված իրավական ակտերի, գրականության և դատական պրակտիկայի նյութերի ցանկ

1. «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-4-Ն, ընդունվել է 22.12.2023 թ., ուժի մեջ է մտնելու՝ 01.09.2024 թ., սկզբնաղբյուրը՝ միասնական կայք 2024.01.9-2024.01.21:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, ՀՕ-239, ընդունվել է 05.05.1998 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.1999 թ., ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

3. «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՕ-197, ընդունվել է 26.06.2001 թ., ուժի մեջ մտել՝ 01.01.2002 թ., ՀՀՊՏ 2001.08.02/25(157) Հոդ. 580:

4. Directive (EU) 2015/2302 of the European Parliament and of the Council of 25 November 2015 "On package travel and linked travel arrangements", amending Regulation (EC) No 2006/2004 and Directive 2011/83/EU of the European Parliament and of the Council and repealing Council Directive 90/314/EEC

5. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Առաջին մաս, 3-րդ հրատ., «Երևանի համալսարանի» հրատ., Երևան, 2006, 559 էջ:

6. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 4-րդ հրատ., «Տիգրան Մեծ» հրատ., Երևան, 2014, 559 էջ:

7. Բեքմեզյան Գ. Հ., Արտապայմանագրային պարտավորություններ, Երևան, «ԵՊՀ հրատ.», 2009, 267 էջ:

8. Carlos Torres, Javier Melgosa Arcos, Laurence Jegouzo and others, Collective commentary about new Package travel directive, ESHTE, 2020, 1344 pages.

9. Гражданское право, Учебник в 4-х томах, Том 1, под ред. Е.А. Суханова, 2-е изд., М. “Статут” 2019, 576 стр.

10. Завьялова С., Проблемы гражданско-правового регулирования туристской деятельности в Российской Федерации, Монография, М., Проспект, 2016, 241 стр.

11. Judgement of England and Wales High court of 28/07/2005, on case Healy v Cosmosair.

12. Judgement of Supreme Court of United Kingdom of 30/07/2021, on case X v Kuoni Travel Ltd.

Սաղոյան Ե. - ՀՀ գլխավոր դատախազի խորհրդական, Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս, էլհասցե՝ eva.g.saghoyan@gmail.com:

Ներկայացվել է խմբագրություն 15.04.2025 թ., տրվել է գրախոսության 26.05.2025 թ., երաշխավորվել է իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հայկյանցի կողմից, ընդունվել է տպագրության 10.07.2025 թ.: